ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
(1881—1961)



Մայիսի 4-ին, չորեքշաբթի օրը, կարճատև հիվանդությունից հետո, 81 տարեկան հասակում, Երևանում ի Տեր հանգյավ արժանապատիվ Տ. Կարապետ քահանա Գրիգորյանը։

Հանգուցյալը ծնվել է 1881 թվականին Հոկտեմբերյանի շրջանի Մեծ Շահրիար (Նալբանդյան) գյուղում, նախնական կրթությունն ստացել է գյուղի ծխական դպրոցում, ապա Երևանի թեմական դպրոցում։

1912 թվականին ձեռնադրվել է քահանա Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանից Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, իր գյուղի Ս. Գևորգ եկեղեցու վրա։

Հանգուցյալը խղճի մտոք երկար տարիներ քահանայագործել է նաև Աշտարակի Ս. Աստվածածին եկեղեցում։ Իր երկարատև և անբասիր ծառայության համար, Տ. Կարապետ քահանան պարգևատրվել է քահանայական լանջախաչով երջանկահիշատակ Տ. Գևորգ Ե Կաթողիկոսի կողմից։

Մայիսի 5-ին, Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, կատարվեց հանգուցյալի վերջին օծումը։ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը խոսեց դամբանական՝ վեր հանելով հանգուցյալի արժանիքները։

Հանգի՜ստ նրա ոսկորներին։